Երևան, 10 սեպտեմբերի, 2019 Կարծիք ԻՊԱՍ(2019)ԴԻԾ01/09

ԿԱՐԾԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

“Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների”հասարակական կազմակերպություն
0002 Երևան, ՀՀ, Ամիրյան 11
+374 10 505303
info@prwb.am

Սույն փաստաթուղթում տեղ գտած մտքերն ու կարծիքներն օգտագործելիս խնդրում ենք պահպանել հղումը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, Կարծիք ԻՊԱՍ(2019)ԴԻԾ01/09 հղումը

Ծանոթություն

2019թ. օգոստոսի 26-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակվել է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Սույնով ներկայացվում է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կարծիքը ռազմավարության վերաբերյալ:

Ընդհանուր նկատառումներ Ռազմավարական ուղղությունների վերաբերյալ

1.1. Ռազմավարությունը համախմբում է մի քանի նպատակներ, որոնց տրամաբանական կապը և իրականացման արդյունքում դրանց ազդեցությունը դատական իշխանության գործունեության բարեփոխումների վրա ներկայացված չէ: Այս տեսանկյունից ռազմավարության իրականացումը անհամաչափորեն է բաշխում խնդիրները՝ նվազեցնելով այն խնդիրների շեշտադրումը, որնցից անմիջականորեն կախված է դատական և իրավական համակարգի լիարժեք բարեփոխումը:

1.1.1. Օրինակ՝ Ընտրական օրենսդրության, սահմանադրական բարեփոխումների ռազմավարական նպատակները թե բովանդակության, և թե գործողությունների առումով ընդգրկուն են, և դրանք կարող են առանձին ռազմավարություններ հանդիսանալ:

1.1.2. Նախատեսվող անցումային արդարադատությունը հիմնված է իրականացման հատուկ գործիքակազմի վրա՝ 1991 թվականի սեպտեմբերից վեր տեղի ունեցած բոլոր ընտրական գործընթացների ընթացքում մարդու իրավունքների զանգվածային և պարբերական խախտումների փաստերի հավաքագրում, որոնց հիման վրա կարող են ներկայացվել ինստիտուտցիանալ բարեփոխումներ, այդ թվում՝ օրինակ ընտրական օրենսգրքում փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը:

1.1.3. Էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծումը ավելի շատ համապատասխանում է միջոցի ձևաչափին, որը կարող է օգտագործվել արդարադատության արդյունավետության մեծացման նպատակի համար:

Բացի այդ, այդ նպատակի ներքո ներկայացված ուղղությունները, ինչպիսիք են «Իրավաբանական անձանց էլեկտրոնային գրանցման e-register համակարգի արդիականացում», «Նոտարի կողմից էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով գործարք վավերացնելու և

փաստաթղթերի փոխանակման (փոխանցման) պայմանների ապահովում» ուղղությունները արդարադատություն իրականացնող ինստիտուտների գործունեության հետ ուղղակի և անմիջական առնչություն չունեն:

Առաջարկում ենք՝

1.2. դատական և իրավական բարեփոխումների ծրագրում շեշտադրել բացառապես արդարադատության ինստիտուների համակարգային և դրանց գործառնական պարտականությունների իրականացմանը սպասարկող իրավական ակտերի փոփոխությունները:

1.3. Ռազմավարությունից բխող օրենսդրական փոփոխությունները դիտարկել ոչ թե որպես առանձին ռազմավարական ուղղություն, այլ ռազմավարության իրականացման միջոց:

2. Ռազմավարությամբ նախատեսված է ընդհանուր առմամբ 18 ուղղություն, որոնց գերակշիռ մասը նախատեսված է եղել նաև նախորդ ռազմավարություններում: Ուղղությունների լայն ցանկ ունենալը ողջունելի է, սակայն նախորդ ծրագրերի իրականացման փորձը ցույց է տալիս, որ պրակտիկայում ոչ բոլոր ուղղություններն են դառնում իրագործելի սահմանված ժամանակահատվածի համար:

Առաջարկում ենք՝

2.1. կրճատել նախատեսված ուղղությունները և ռազմավարությունը դարձնել իրագործման տեսանկյունից առավել իրագործելի:

Նկատառումներ առանձին ռազմավարական ուղղությունների և դրանց բովանդակության վերաբերյալ

1. ***Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում***

1.1. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման շրջանակներն ամրագրվել են մարդու իրավունքների զանգվածային պարբերական խախտումների փասերի հավաքագրման հետևյալ ոլորտները՝ ա) 1991 թվականի սեպտեմբերից ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրական գործընթացներ, բ) 1991 թվականի սեպտեմբերից ի վեր հետընտրական գործընթացում տեղի ունեցած քաղաքական հետապնդումներ, գ) Հայաստանում պետության կամ հասարակության կարիքների համար գույքի հարկադիր օտարումներ, դ) սեփականազրկումների այլ դրսևորումներ, ե) ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողներ:

Ռազմավարությամբ որևէ հիմնավորում չի ներկայացվել, թե ինչու են ընտրվել այս ոլորտները, և ՀՀ-ում մարդու իրավունքների զանգվածային և պարբերական խախտումների վերաբերյալ թե գնահատականը, թե դրանց վերացմանն ուղղված հնարավոր գործողությունները դուրս են մնացել: Օրինակ՝ 2015 թվականի Էլեկտրիկ Երևանի, 2016 թվականի Սասնա Ծռերի և 2018 թվականի ապրիլյան հեղափոխության ընթացքում մարդու իրավունքների զանգվածային խախտումների, դրանից տուժող անձնաց վերաբերյալ որևէ անդրադարձ նախատեսված չէ:

Բացի այդ, ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողների մի քանի գործերով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը Հայաստանի դեմ կայացրել է կարևորագույն որոշումներ, որտեղ արդեն իսկ արձանագրվել են այդ ոլորտում առկա համակարգային խնդիրները:

Կարծում ենք այդ առնչությամբ նոր փաստահավաք առաքելություն իրականացնելու անհրաժեշտություն չկա:

Առաջարկում ենք՝ պետությունը, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները, պետք է ընթացիկ գործերով ճանաչի մարդու իրավունքների խախտումները և տուժողներին համարժեք փոխհատուցում տրամադրի:

1.2. Ռազմավարությամբ նախատեսվում է ստեղծել փաստահավաք հանձնաժողով, որը կազմված կլինի առավելագույնը 20 անդամներից, ովքեր ներկայացված են լինելու հասարակության մեջ հեղինակություն վայելող անձանցից՝ ապահովելով հասարակության տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցչությունը:

Առաջարկում ենք՝ հաշվի առնելով հանձնաժողովի համար նախատեսվող լիազորությունները և դրանց ծավալը, ձևավորել նաև Հանձնաժողովի օժանդակող մասնագիտացված աշխատակազմ, այդ թվում՝ մշակելու համապատասխան գործիքակազմ ու գործունեության մեթոդաբանություն, դատաբազա, իրականացնելու իրավական հետազոտություններ ու վերլուծություններ, մարդու իրավունքների խախտումների որակումներ, համապատասխան սոցիալ-պատմական գործընթացների վերլուծություն իրականացնելու, խոցելի խմբերի հետ հարցազրույց իրականացնելու, պատշաճ զեկույց ու առաջարկություններ մշակելու համար, ինչպես նաև ներգրավել հանձնաժողովի աշխատանքի կազմակերպման, վարչարարության ու ֆինանսական միջոցների տնօրինման, հաղորդակցության մասնագետներ:

2. Դատական իշխանության անկախության և անաչառության ապահովում

Ռազմավարական վերոնշյալ նպատակի ներքո տեղ գտած կարևոր ուղղություններին ի հավելում **<u>առաջարկում ենք</u>** ներառել նաև Դատավորների գնահատման ընթացակարգերի վերանայումն ու համապատասխան փոփոխությունների նախաձեռնումը:

3. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում

Հաշվետվողականությունը ուղղակիորեն կապված է դատական իշխանության անկախության և արդյունավետության հետ: Ավելին, հաշվետվողականության ապահովումը որպես ռազմավարական առանձին նպատակ իրենում ներառում է առանձին ռազմավարական ուղղություններ, որոնք տրամաբանորեն կապված են այլ ռազմավարական նպատակների հետ: Օրինակ, *կատարելագործել դատական գործերի էլեկտրոնային մակագրություն և բաշխման կարգը*, որը հնարավոր է դիտարկել էլեկտրոնային արդարադատության հարթակի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում ռազմավարական նպատակի ներքո, և ապահովել ինչպես հաշվետվողականության սկզբունքը, այնպես էլ կառավարման էլեկտրոնային դարձնելու նպատակը:
Նմանապես, *կարգապահական հանձնաժողովի կազմավորման կարգի բարելավում ուղղությունը* կապված է նաև դատական իշխանության անկախության ռազմավարական նպատակի հետ,

հետևաբար այն նույնպես հնարավոր է կապել այդ նպատակի հետ: Նույնը վերաբերում է դատավորների գույքի, եկամուտների, շահերի, ծախսերի ամբողջական հայտարարագրմանը:
Ռազմավարությամբ նախատեսվում է դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան ընթացակարգերի ներդնում, որը հիմնականում ընդգրկում է գնահատման հանձնաժողոցի կազմավորման կարգի փոփոխություն, և գնահատման չափանիշների հստակեցում և գնահատման պատճառաբանվածության ապահովմանն ուղղված կարգավորման նախատեսում: Ռազմավարության նման ձևակերպումը, ըստ էության, վերաբերում է գրավոր քննությանը, մինչդեռ հարցազրույցի գնահատման չափանիշները ևս հստակեցված չեն, ավելին հարցազրույցի արդյունքներն ամփոփումից հետո դատավորների թեկնածուների ընտրության քվերակությունը կատարվում է գաղտնի ու իրենց քվեարկության համար ԲԴԽ անդամներին որևէ պատճառաբանություն ներակայցնելու պահանջ ներկայացված չէ:
Նույն ռազմավարական ուղղության «դ» ենթակետով նախատեսվում է նաև ներդնել քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգ և Բարձրագույն դատական խորհրդի որոշման ընդունման թափանցիկության ապահովում: Նման ձևակերպման պայմաններում անհստակ է, թե արդյո՞ք նախատեսվում է բողոքարկման ընթացակարգը ներդնել Բարձրագույն դատական խորհրդի շրջանակներում և ապահովել բողոքարկման գործընթացի շրջանակներում որոշման կայացման թափանցիկությունը:
Առաջարկում ենք,
Դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում ռազմավարական նպատակի ներքո տեղ գտած ուղղությունները վերախմբավորել համապատասխանաբար վերաբերելի նպատակների և ուղղությունների ներքո, այդպիսով ռազմավարությունը դարձնելով ավելի համապարփակ, իսկ ուղղությունները՝ ընդգրկուն, սակայն ավելի քիչ:
Ռազմավարությամբ հստակորեն ամրագրել դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման ինչպես գրավոր փուլի, այնպես էլ հարցազրույցի գնահատման չափանիշների հստակեցման, այնպես էլ պատճառաբանվածության ապահովումը:
Հստակորեն սահմանել բողոքարկման ընթացակարգի տեսլականը ռազմավարությամբ, և նախատեսել բողոքարկման ընթացակարգի արդյունավետության հստակ երաշխիքներ, այդ թվում՝ որոշման պատճառաբանվածության ապահովումը:

4. Կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ

Այս ռազմավարական նպատակի ներքո ներկայացված է առանձին ուղղություն՝ Դատավորների բարեվարքության գնահատումը: Ինչը իր հերթին նախատեսում է դատավորների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար ստեղծել ոչ թե նոր՝ *ad hoc մարմին, այլ այդ լիազորությամբ օժտել դատական համակարգի անկախության ապահովման սահմանադրական առաքելությամբ օժտված մարմնին՝ Բարձրագույն դատական խորհուրդին*:

Առաջարկվում ենք՝ բարեվարքության գնահատման իրավասությունը տալ իրապես անկախ մարմնի՝ ըստ այդմ նախատեսելով այդ մարմնի ձևավորման մեխանիզմներն ու անաչառության անհրաժեշտ երաշխիքները:

5. Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացում

Նախագծով նախատեսվում է *Հակակոռուպցիոն դատարանի ստեղծում* այն հիմնավորմամբ, որ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունը պահանջում է առանձնահատուկ հմտությունների, գործը քննող դատավորների նկատմամբ հանրային բարձր վստահություն և բարձր մասնագիտական որակներ: Նման հիմնավորմամբ նոր դատարանի ստեղծման անհրաժեշտության հիմնավորումը նսեմացնում է ընդհանուր իրավասության դատարանների դատավորների ու նրանց կարողությունների նկատմամբ հանրային վստահությունը: Այն հանգամանքը, որ կոռուպցիոն հանցագործությունների քննությունն իսկապես պահանջում է ոլորտային խորը գիտելիքներ ու փորձառություն, հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը ինքնին երաշխիք չէ կոռուպցիոն հանցագործությունների արդյունավետ քննության համար, և որ ընդհանուր իրավասության դատարաններում այդ խումբգործերի քննության իրականացումն անհնարին է: Ավելին, Ռազմավարությամբ որևէ հիմնավորում չի ներկայացվում, որ հակակոռուպցիոն դատարանի նկատմամբ հանրային վստահությունն ավելի բարձր կլինի:
Չնայած Ռազմավարությամբ նշվում է, որ նոր դատարանի ստեղծումը որոշ չափով կնվազեցնի ընդհանուր իրավասության դատարանների ծանրաբեռնվածությունը, դրանով չի ներկայացվում կոռուպցոին հանցագործությունների չափաբաժինը ընդհանուր հանցագործությունների վիճակագրության համատեքստում:
Նման պայմաններում գտնում ենք, որ ընդհանուր իրավասության դատարանների արդյունավետության և անկախության բարձրացման, դատավորների թվաքանակի ավելացման և մասնագիտական պատշաճ վերապատրաստումների (Ռազմավարությամբ շեշտն ինքնին դրվում է կոռուպցիոն, տնտեսական, ու պաշտոնեական հանցագործությունների քննության վրա) ապահովման դեպքում նման դատարանի ստեղծման անհրաժեշտություն չի լինի:
Ավելին, Ռազմավարությամբ չեն հիմնավորվում նոր դատարանի ստեղծման ծախսային արդյունավետությունը (cost-effectiveness), ըստ նստավայրերի՝ բաշխվածությունը նայլն:

6. Դատավորների կարողությունների շարունակական զարգացում

Վերջինիս ներքո ներկայացված քայլերը իրականացնելիս կենտրոնական դեր պետք է ունենա Արդարադատության ակադեմիայում հասանելի կրթության որակի, բովանդակության ու ժամաքանակի վերանայումը:

Ընդհանուր առաջարկներ ռազմավարական ծրագրի վերաբերյալ

- Մինչ նոր ռազմավարական ծրագրի մշակումը իրականացնել նախորդ 15 տարիներին իրականացված ծրագրերի գնահատում՝ վեր հանելով հիմնական ձեռքբերումները, ձախողումների պատճառներն ու ըստ այդմ վերանայել նոր ռազմավարությունը:
- Սահմանել դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի կատարողականի և ազդեցության գնահատման, հաշվետվողականության սխեմա՝ ներառյալ հաշվետվողականության պարբերականությունը, ցուցանիշները:

- Մշակել և որպես ծրագրի մաս ներկայացնել նախատեսված միջոցառումների համար անհրաժեշտ բյուջեն:
- Ծրագրի խնդիրները, դրանց ուղղված միջոցառումները սահմանելիս իրականացնել իրավիճակի վերլուծություն՝ վեր հանելով կոնկրետ խնդիրներ ու ըստ այդմ դրանց ուղղված իրատեսական լուծումներ:
- Նոր ծրագրի շրջանակներում սահմանել գործողությունների իրականանալի ծավալ՝ ապահովելով իրատեսական արդյունքներ: